ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Հ-8

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» հունվարի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ջոն Կարապետյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում»** ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 129 488 700 (հարյուր քսանինը միլիոն չորս հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,
2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,
2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,
2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,
2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 129 488 700 (հարյուր քսանինը միլիոն չորս հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով

հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 Հ/հ 900011024115 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն **Նախագահ՝** (ստորագրություն) **ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ**	ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ, ք.Գյումրի, Վ.Սարգսյան 5, ԳՏԳԲ 900218001080 **Տնօրեն՝** (ստորագրություն) **ՋՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար _____ **Ջոն Կարապետյան**
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 1
«27» հունվարի 2022 թ.
N 6-8 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն **Ջոն Կարապետյանի,** վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» հունվար 2022 թ. N 6-8 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 129 488 700 (հարյուր քսանինը միլիոն չորս հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	**ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ**
Նախագահ՝ Աշոտ Սաղյան	**Տնօրեն՝ Ջոն Կարապետյան**
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Ծրագրի գիտական ղեկավար _____ *(ստորագրություն)*	**Ջոն Կարապետյան** *(անուն ազգանուն)*

Հավելված N 2
«27» հունվարի 2022 թ.
N 6-8 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը**

Իրականացնել գիտական հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրմանը, էներգետիկ և հանքային ռեսուրսների որոնման, հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների զարգացմանը, սեյսմիկականության և երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդիրների լուծմանը, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմոկայունության տեսության մեթոդների կատարելագործմանը, երկրաֆիզիկական նոր սարքերի նախագծմանը և նրանց փոքրածավալ արտադրությանը:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները**

Իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական հետազոտություններ, որոնք կնպաստեն էներգետիկ, հանքարդյունաբերական, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, հանրապետության ազգաբնակչության սեյսմիկ պաշտպանության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ծրագրի իրականացմանը:

Աշխատանքին ներկայացվող կարևոր պահանջներից է նրա կատարումը ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան, ինչպես նաև ստացված արդյունքների հանձնումը սահմանված ժամկետում:

4. **Աշխատանքի բովանդակությունը**

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի գիտական գործունեությունն առաջնորդվում է ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից հաստատված ՀՀ ԳԱԱ 2021-2025թթ. հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրով: Հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրի շրջանակներում ինստիտուտը երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության և ժամանակակից երկրաֆիզիկական սարքաշինության բնագավառներում 2021 թվականին որպես գիտական գործունեության հիմնական ուղղություններ նախատեսում է երկրակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող երկրադինամիկ պրոցեսների ուսումնասիրությունները, գունավոր և հազվագյուտ մետաղների հանքավայրերի հետախուզման և երկրաբնապահպանական, սեյսմիկ ռիսկի գնահատման երկրաֆիզիկական մեթոդների կատարելագործումը, Երկրի մագնիսական դաշտի և նրա վարիացիաների ուսումնասիրությունը, սեյսմաբանական մեթոդներով Հայաստանի տարածքի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակի և տարածաշրջանի երկրաշարժերի օջախների հետազոտումը, ՀՀ հրաբխային տարածքների ստորերկրյա ջրերի տարածական բաշխվածության օրինաչափությունների և հնագետահովիտների ջրերի օգտագործման հնարավորությունների պարզաբանման, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործումը, շենքերի և կառուցվածքների սեյսմակայունության տեսության կատարելագործումը, երկրաֆիզիկական ժամանակակից սարքերի մշակումը:

Նշված ծրագրի շրջանակում առանձին ուղղություններով կատարվող հետազոտությունները թույլ կտան ներկայացնել գիտակիրառական բնույթի կարևոր առաջարկներ, կապված

Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի հետ:

Նշված ուղղություններով նախատեսվող ուսումնասիրությունների արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը նպաստող այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի, երկրաբնապահպանական իրավիճակի գնահատումը, կործանարար և ուժեղ երկրաշարժերի ուսումնասիրությունը և կանխագնահատումը, հանքահումքային բազայի ընդլայնումը, երկրաէներգետիկ այլընտրանքային պաշարների որոնումը, սեյսմակայուն շինարարության տեսական հիմքերի կատարելագործումը և ժամանակակից երկրաֆիզիկական սարքաշինության հայրենական արտադրության կազմակերպումը:

Ըստ նշված գիտական հիմնական ուղղությունների և բնագավառների 2022 թվականին երկրաֆիզիկայի ոլորտում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել երկրակեղևի ժամանակակից ուղղաձիգ և հորիզոնական շարժումների տարածական բաշխման օրինաչափությունները՝ ըստ ՀՀ տարածքի արևմտյան մասի համալիր երկրաֆիզիկական մոդելի բլոկային կառուցվածքի:
- Հյուսիսային ծալքավոր մարզի երկրակեղևի բլոկների նեոտեկտոնական լարվածադեֆորմացիոն վիճակի ուսումնասիրությունը բլոկների տեկտոնական ակտիվության համատեքստում:
- Խորքային երկրաշարժերի տվյալներով կատարել ՀՀ տարածքի վերին մանտիայում սեյսմիկ ալիքների արագությունների կորի ուսումնասիրություններ:
- Ուսումնասիրել Հյուսիսային Հայաստանի ժամանակակից լարվածադեֆորմացիոն վիճակը երկրաշարժերի օջախի մեխանիզմների միջինացված պարամետրերով և լարվածության թենզորների միջոցով:
- Մշակել նոր մեթոդական մոտեցում երկրակեղևի ուժեղ ցնցումներին նախորդող սեյսմիկ անոմալիաների տեղեկատվության աստիճանի գնահատումը՝ որպես նախանշան կիրառելու համար:
- Համադրել տեկտոնական երկրաշարժերի նախապատրաստման և առաջացման ընդհանրացված մոդելը լեռնային ապարների տրոհման տեսության հիմնական փուլերի հետ:
- Իրականացնել Հայաստանի և հարակից շրջանների ընթացիկ սեյսմիկ ակտիվության մոնիթորինգի գնահատում:
- Երկրի հեղուկ միջուկի մակերևութային շարժումների համակարգի մաթեմատիկական մոդելի կառուցումը սֆերիկ հարմոնիկ վերլուծության ապարատի կիրառմամբ, առանձին-առանձին ներկայացնելով արագությունների դաշտի պտտական ու դիվերգենտային բաղադրիչները:
- Միջուկի հեղուկ զանգվածում տեղի ունեցող կոնվեկտիվ բնույթի պրոցեսի առանձնահատկությունների հետազոտումը մագիսական հիդրոդինամոյի տեսության շրջանակներում՝ ըստ մակերևույթին ձևավորվող հոսքերի նկարագրման համար ստացված մաթեմատիկական մոդելների:
- Երկրամագնիսական դաշտի դարային վարիացիաների բարձր-հաճախային տիրույթը ձևավորող վարիացիաների բնութագրական տարածաժամանակային առանձնահատկությունների, դրանց առաջացնող հնարավոր մեխանիզմների վերլուծությունը:
- Երկրամագնիսական դաշտի և սեյսմիկ ակտիվության վարիացիաների միջև հնարավոր կապի ուսումնասիրումը մաթեմատիկական վիճակագրության ապարատի կիառմամբ:
- Թիթեղի հարկադրական տատանումների ուսումնասիրությունը պտտական շարժման նկարագրման հաշվարկային սխեմաների մշակմամբ ու կիրառմամբ:
- Ուսումնասիրել բնական տեղադրման պայմաններում հանքամարմինների բաշխվածության փոփոխության ազդեցությունը ռենտգենառադիոմետրական նմուշարկման ժամանակ:
- Կառուցել ՀՀ ոսկու հանքավայրերի հավանականային- վիճակագրական մոդելներն ըստ ֆիզիկաերկրաբանական պարամետրերի:

- Ուսումնասիրել էլեկտրական լիցքի մեթոդի որոնողա-հետախուզական հնարավորությունները Հայաստանի պղնձի հանքավայրերի համար:
- Թեղուտի պոչամբարի պատվարի ֆիլտրացիոն կայունության վրա ազդող հիմնական գործոնների վերլուծություն և դասակարգում, հարակից լանջերի կայունության և ինֆիլտրացիոն երևույթների գնահատման համար էլեկտրո- և սեյսմահետախուզական ուսումնասիրությունների իրականացում:
- Ուսումնասիրել Հայաստանի տարածքի երկրակեղևի երկրադինամիկան հիդրոերկրադինամիկայի, հիդրոերկրաքիմիայի ժամանակակից մեթոդներով, թեքաչափական-դեֆորմացիոն պարամետրերով և ընթացիկ սեյսմիկությամբ:
- Հայաստանի տարածքի տարբեր տեղամասերում երկրակեղևի դեֆորմացիոն գործընթացների բնույթի և լարվածության ձևափոխման ուսումնասիրությունը երկրաքիմիական մեթոդներով:

Երկարաժամկետ (2021-2025թթ.) գիտական ծրագրի՝ ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության տեսության ու պրակտիկայի և երկրաֆիզիկական սարքաշինության ուղղություններով իրականացվող խնդիրների արդիականությունը և նրանց հիմնավորումը պայմանավորված են ներքոհիշյալ կարևոր պրոբլեմների լուծմամբ.

I. ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործում:
II. Սեյսմակայունության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը՝ հաշվի առնելով շենքերի և կառուցվածքների կոնստրուկցիաների իրական աշխատանքը:
III. Երկրաֆիզիկական սարքաշինություն:

Դուրս գալով գիտական հետազոտությունների ծրագրի նախանշված ուղղություններից, 2022 թվականին նախատեսվում է իրականացնել.

առաջին պրոբլեմի շրջանակում՝

- ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հավանականային գնահատմամբ 1:200000 և 1:500000 մասշտաբների նոր քարտեզների կազմում՝ սեյսմոտեկտոնական արդիականացված քարտեզների կիրառմամբ:

երկրորդ պրոբլեմի շրջանակում՝

- Ուսումնասիրել տեկտոնական երկրաշարժերի նախապատրաստմանն ուղեկցող գրավիտացիոն և էլեկտրամագնիսական երևույթները:

երրորդ պրոբլեմի շրջանակում՝

- Բնապահպանական միջավայրում /գետեր, լճեր, ջրամբարներ և այլն/ չափումների համար անհրաժեշտ սարքերի նախագծում, պատրաստում, չափաբերում և տեղադրում:
- Ինժեներա-սեյսմաբանական ուսումնասիրությունների համար դյուրակիր, հեռահաղորդակցվող, եռաբաղադրիչ կայանի նախագծում, փորձնական նմուշի պատրաստում, փորձարկումներ:
- Ինստիտուտի տարբեր լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքերի նախագծում և պատրաստում:
- Կատարել փոքրածավալ տատանողական հորիզոնական հարթակի կոնստրուկտիվ ձևափոխություններ՝մեծացնելով չափումների ճշտությունը և ապահովել համակարգչային նոր ծրագրով:

Ինստիտուտի գործունեության զգալի մասը զբաղեցնում է կիրառական հետազոտությունները: Սկսած մեթոդական հարցերից, մինչև տեխնոլոգիա, կիրառական բնույթի քարտեզներ, տարրաբնույթ սեյսմիկ տվիչներ, երկրաֆիզիկական դյուրակիր բազմաֆունկցիոնալ մոնիտորինգային համակարգեր, որոնք իրենց տեխնիկական բնութագրերով չեն զիջում միջազգային բրենդային ֆիրմաների կողմից արտադրվող սարքավորումներին, բացի այդ գնային և նորարական լուծումներով համարվում են մրցակցային: Նշված սարքավորումների

կիրառության ոլորտը բավականին լայն է և ընդգրկում է Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ, Բանակ, Քաղաքաշինություն, Էներգետիկա, Արդյունաբերություն:

Ինստիտուտում իրականացվում եմ 10 ավելի կիրառական բնույթի ծրագրեր, որոնք ենթակա են առևտրայնացման և ունեն իրացման մեծ շուկա:

5. **Նախատեսվում է** Ծրագրի շրջանակներում ստացված արդյունքները հրապարակել բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային հոդվածներում ընդգրկված Web of since, Scopus միջազգային շտեմարաններում: Բացի այդ հնարավորության դեպքում մասնակցել առկա և հեռակա միջազգային գիտաժողովների, հանդես գալ բանավոր զեկույցներով և համապատասխանաբար ներկայացնել գիտական թեզիսներ: Ծրագրի իրականացման շրջանակներում դիտարկվում է որոշակի փուլում կատարված աշխատանքների լայն քննարկում շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ: Կազմակերպել համակողմանի քննարկում, խնդրահարույց հարցերի բարձրաձայնում, ստացված տվյալների ներկայացում, քննարկում: Ծրագրի իրականացման և աշխատանքների կորդինացման համար նախատեսնվում է լայնորեն կիրառել ցանցային հաղորդակցության (Skype, Zoom) հնարավորությունները, ինչպես նաև փոխադարձ այցելությունները:

Տնօրեն՝ _____ **Ջոն Կարապետյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ **Ջոն Կարապետյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 3
«27» հունվարի 2022 թ.
N Ֆ-8 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

№ ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվանումը	Համառոտ բովանդակություն	Ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդթվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները	Պահանջվող գումարը (հազ դրամ)
1	Գիտամեթոդական, գիտատեխնիկական և գիտակիրառական ուսումնասիրությունների իրականացում, համեմատական վերլուծություն,	Մեթոդական հարցերի մշակում, գիտակիրառական մեթոդների մշակում, համեմատական վերլուծություն	Մեթոդների համեմատական գնահատում, ստացված տվյալների համակարգում և ներկայացում	Որակական և քանակական առնչությունների ներկայացում, մեթոդական, վիճակագրական մշակումներ և վերլուծություններ, քարտեզներ, գրաֆիկներ, կորեր և այլն	01.01.2022-31.03.2022	25897.6
2	Տեսական, գիտագործնական, հետազոտություններ, մոդելներ, ռեժիմային դիտարկումների իրականացում	Գիտակիրառական, գիտամեթոդական աշխատանքներ	Մեթոդիկաների կատարելագործում, ստացված տվյալների ուսումնասիրում, դրված խնդիրների լուծում (շարունակական)	Դիտարկումների արդյունքների վերլուծություն, մեկնաբանում, գիտական, գիտակիրառական նոր մոտեցումների առաջարկում	01.04.2022-30.06.2022	32372.2
3	Քարտեզների տարբերակների կազմում, լաբորատոր-փորձարարական հետազոտություններ	Հաշվարկային ալգորիթմների ստեղծում, քարտեզների թվայնացում, լաբորատոր փորձարկումների իրականացում	Հաշվարկների իրականացում, հավասարումների ստացում, քարտեզների տարբերակների կազմում	Հանքային ռեսուրսների որոնման,երկրաբնապահպանական, սեյսմիկ անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գիտական, գիտակիրառական առաջարկների ձևակերպում, գնահատում	01.07.2022-30.09.2022	32372.2
4	Կատարված աշխատանքների, հետազոտությունների և ստացված արդյունքների ամփոփում	-	-	-	01.10.2022-31.12.2022	38846.7
Ընդամենը						***129 488.7***

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Աշոտ Սաղյան

(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

Տնօրեն՝ Ջոն Կարապետյան

(ստորագրություն)

Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել ենթաբնակային փուլերով*

Հավելված N 4
«27» հունվարի 2022 թ.
N Հ-8 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	107388.8	21477.7	26847.2	26847.2	32216.7
2	տնտեսական և այլ ծախսեր*	22099.9	4419.9	5525.0	5525.0	6630.0
ԸՆԴԱՄԵՆԸ		***129 488.7***	***25897.6***	***32372.2***	***32372.2***	***38846.7***

Տնօրեն՝ _____ **Ջոն Կարապետյան**
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ **Ծաղիկ Հովհաննիսյան**
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ **Ջոն Կարապետյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված N 4.1
«27» հունվարի 2022 թ.
N 2-8 պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**12939.0**
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*9250.4*
	գազի ծառայություն	*2280.0*
	ջրամատակարարման ծառայություն	*82.5*
	կապի ծառայություն	*860.5*
	աղբահանություն	*465.6*
2	Գույք	--
3	Սարքեր և սարքավորումներ	**2810.9**
4	Նյութեր	**1600.0**
5	Գործուղումներ	**4500.0**
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	--
7	Արշավախմբեր	--
8	Հրատարակման ծախսեր	**250.0**
	.....	
Ընդամենը		**22099.9**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) **Ջոն Կարապետյան** (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) **Ծաղիկ Հովհաննիսյան** (անուն ազգանուն)

Ա.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*